

որ՝ ինչպես գիտենք ոսկրաբանագիտիչ է եւ ոսկրածին: Կենդանիի ոսկր մարդու վրայ փոխադրելու գաղափարը բոլորովին նոր է բժշկական աշխարհին մէջ, հազիւ 1885ին Գեոորգի եւ Տիւռնաթէ Իտալ. բժիշկները կը փորձեն զայն. 1886 եւ 1887ին Օլլիէ եւ Բոնսէ Վիոնցի վերաբրժները, եւ 1907 ու 1909ին ալ՝ Գառեշ եւ Գոսման գիտնականներն եւ ուրիշներ հետազննեցին: Ըստ այսմ՝ Երեւանցի հայ բժիշկին ըրածն ալ աւելի մեծ կարեւորութիւն կը ստանայ բժշկական պատմութեան առջեւ ընդհան. րապէս, եւ մասնաւորապէս՝ հայ բժշկական պատմութեան համար:

Չեմ կրնար սակայն ըմբռնել, որ այդչափ արագ ու մեծ ճարտարութեամբ տեղի ունեցած գործողութիւն մը, Գէորգ բժիշկ Երեւանցի կիբն տուալին անգամ յանկարծ մոռածած, հետքած ըլլայ. անպատճառ զայն տեղէ մը սորված, լսած կամ տեսած ըլլալու էր նա, որպէս զի համարձակէր յեղակարծ կերպով զայն փորձարկել:

Այս երկարութեամբ, կրնանք Ոսկրապատուաւոր ծագումն աւելի եւս առաջ տանիլ, 19րդ դարու սկիզբէն առաջ եւ 18րդի վերջերը, ու անոր հայրենիքն ալ համարիլ առ այժմ՝ Այսրաստեան նահանգը??:

Թաղիագեանցի հակիրճ գրութեամբն հին հայ բժիշկի մը այս ըրածը կարգաւով, ես կը հիշեմ ալ այսօր անոր վերաբուժական հմտութեան, ճարտարութեանն եւ ձեռքի ճարպիկ արագութեանը վրայ, երբ մանաւանդ կը տեսնեմ՝ որ կատարած այդ խիստ փափուկ գործողութիւնն ալ կը պատկուի փառաւոր յաջողութեամբ. յարգանք անոր յիշատակին:

Արդեօք գործողութեան միջոցին Գէորգ բժիշկ հականիսնց աղջկան վէրքը, քնացուց զայն:

— Բա՛ղ ներուի ինձ ըսել, որ սպիղանի բառը, զոր կը կարդանք Թաղիագեանցի գրութեան վերջը, ապացոյց է տեսակ մը հականիսութեան. հին ժամանակներու սպիղանիներն իրենց ունայնային ու խիժային այլ եւ այլ կերպ բաղադրութիւններով, արդի հականիսութեան դերը գրեթէ կը կատարէին: Քնացնելու պարագային զայով, երբէ Գէորգ բժիշկ լծմիեցուց գործողութեան երկաթայ աղէկը, այդու

պահարակելի բան ըրած չ'ըլլար, քանի՜ որ գեոորգի՝ անգլապացուցիչ եւ թմբկեցուցիչ գեղեցիկ գիտնական առաջ Եւրոպայի ամենանշանաւոր վերահասները՝ թեւ, ոտք կը կորէին, կը սղոցէին, փոր եւ միգաման կը բանային առանց հիւանդները քնացնելու:

Հայ բժշկական հին պատմութիւնը գեոանկրի գետին մըն է, կը պարունակէ այն շատ հետաքրքրական նիւթեր բոլորովին անծանօթ. Երեւանցի Գէորգ բժիշկին կատարած Ոսկրապատուաւոր՝ իր գրեթէ միագարեան հնութեամբն այդ անկրի գետինն չ'ընաղ եւ թանկագին վարդերէն մին է, թող ըլլայ այն պատիւ հայ բժշկութեան:

Ո՛վ էր այս Գէորգ Երեւանցի բժիշկը, ուր ուսած էր նա բժշկութիւնը, ի՞նչ եղած է անոր կեանքը . . .

Այս մասին ալ ուրիշ առթիւ:

ՅՕԺԹ. ՎԱՍԻՄ Ե. ԹՈՐԻՍՏԻՆՍ



Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Ս. ՅԱԿՈԲ

Ս Ջ Գ Ռ Յ Ի Ն Հ Ի Ի Ն Գ Ո Ն Ռ Ց

—
ԺԳ.

Ժ. ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ

1889—1892

(Հարանախոսութիւն)

Հոգարարութիւնս 1890 տարւոյ ելմոյց հաշուեցուցակը կը ներկայացնէ Ազգ. վարչութեան յաջորդ տարւոյ Յունուար 26ին հանդերձ նախատեսեալ հաշւով (Budget): Հաշուեցուցակիս մուտքին կողմը կը տեսնուի 303.591:20 ղուրուշ. իսկ ելքին կողմը 295.030:20, եւ շտեմարանին մէջ պատրաստ պարէն 8561 ղուրուշի վարչութիւնը գոհացուցիչ կը գտնէ այս հաշիւները, ըստ սուղ 250 օսմ. ոսկին նախակրթարանի մը տարեկան ծախուց համար, ուստի կը հրահանգէ Հոգարարութիւնը որ պահելով դպրոցին արդի վիճակը՝ յիշեալ գումարով գտնէ արհեստանոց մը բանալ Ենկիւնոյցին մէջ, Գաւով հաշուեքնութեան՝ կը յանձնէ զայն Մըսրուր Օննիկ

decine et de Chirurgie de Jaccoud, 2^e 25, էջ 243:

«La Semaine Médicale», Paris 1885, էջ 324. 1886, էջ 399, 412. 1887, էջ 128. 1907, էջ 299:

դէկին, որ ունելով ի գրպանի ներկայացուած հաշուեցուցակը՝ Անկելանոցին խորհրդարանը կու գայ. եւ Հոգաբարձուաց առաջակայուածներն բաղդատելով զայն մայր տումարին հետ՝ մեծ գոհունակութիւն կը յայտնէ նկատմամբ անոնց ճշգրտութեան: Առթիւս կ'այցելէ նաեւ Անկելանոցիս բոլոր յարկերուն, եւ յուսացածէն շատ աւելի բարեկարգ կը գտնէ, որուն համար շնորհակալութիւն յայտնելով Հոգաբարձուաց թէ իր եւ թէ իր վարչական պաշտօնակցաց կողմանէ՝ կը մեկնի: Քանի մ'օր ետքը հաշուեցուցակը կը վերադառնայ հաստատեալ Ազգ. վեչ. ժողովէն եւ վաւերացեալ վ. Պատրիարքին կնքով եւ ստորագրութեամբ, հանդերձ արտօնագրով՝ տպագրութեամբ ի լոյս ընծայելու, ուսկից մի մի օրինակ կը ղրկուի Մարաբաղաբն եւ Եւրոպա բնակող Յարգող ազգայնոց, ինչպէս նաեւ ամեն գաւառական Առաջնորդաց: Հաշուեցուցակիս տեղեկագիրքէն նաեւ իր քաղնքը որ տարւոյս մէջ 105 հիւանդներ օրըստօրէ պատասպարուեր են Անկելանոցին մէջ, բաց ի հաստատուած պատասպարեալներէն, որոնցմէ տասնուչորս առ հարիւր միայն կը վախճանին:

Հոգաբարձութիւնը կ'օտարացնէ անմիջապէս 101 օսմ. ոսկիով ի Պերս Տուվարձը փողոցի թիւ 84 փայտաշէն տունը մտնուածք թագուհւոյ դստեր վարդանայ, որ գրուած էր Նիւզէլ Մարինքա Տուտուի անունաւ: Այս գումարը կը գործածուի Անկելանոցիս եւ կալուածոց ոմանց նորոգութեանց առաջնորդութեամբ Ալէուսեան Անտոն ճարտարագետին, որուն կը հսկէ Հոգաբարձութեան անդամներէն Զինկիլի Պաթիսթ, որ իր ետքը Միշէլի հրատարակմամբ անոր տեղը անցած էր: Ար փութայ նաեւ Նոյնմբեր ամիսէն բանալ տվորական հանգարանի թիւնը հասարակութեան մէջ ի նպատակ Անկելանոցիս՝ առանձինն բաժնեթուղթեր հրատարակելով, որոնցմէ կը ղրկէ նաեւ եւրոպայեան ազգայնոց որ են.

Ասեմ. Օննիկ Պէյ Տիւզ ի Բարիզ
 " Գրիգոր էֆ. Չափլ " "
 " Պաղտ " Տամաթ " "
 " Մաթթու " " "

Մեծպ. Յովհաննէս էֆ. Վարդան ի Բարիզ
 Rue Lufitte 45
 " Բիէռ էֆ. Սիւզէլ ի Բարիզ Rue Générat Foy 8
 " Ժիւլ էֆ. Քէլլի ի Բարիզ
 " Ժօզէֆ էֆ. Հասուն ի Բարիզ

Մեծպ. Բիէռ էֆ. Ալենար ի Բարիզ Rue
 Messageries 5
 " Երուանդ էֆ. Թընկու ի Բարիզ
 " Սիւի էֆ. Հիւրմիւլ ի Բարիզ
 " Յակոբ էֆ. Այաւնկիւլ ի Բարիզ
 " Յակոբ էֆ. Սեֆեան ի Բարիզ Rue
 Luftite 45
 " Պօղոս էֆ. Ապտուլազ ի Բարիզ
 " Պարեգին էֆ. Պէշկիմաշլեան ի Բարիզ
 " Խնկեսէր էֆ. Ճէլալեան ի Բարիզ
 " Վէստան էֆ. Մարատեան Marseille,
 Boulevard de N. Dame 44
 " Վէստան էֆ. Պայօղու
 " Յակոբ էֆ. Փափալեան, Londres
 " Յակոբ էֆ. Անտեան, Vienne Neustadt
 " Վիլէն էֆ. Բէքմէզ, Varna
 Գեր. Գաւառական Առաջնորդը
 Գեր. Արքահայր Միքայէլութեանց: (Գ. Սն
 84. Տր. 81.)

Հանգանակութենէն գոյացած գումարէն մաս մը կը հանուի ծննդեան տօնին առթիւ ուսեան բաշխելու համար ըստ համեմատութեան թուոյ անձանց իւրաքանչիւր ընտանեաց, որ աղքատութեան վկայական ունի ի ձեռն ի իւրու տվական հրովն: Բաշխածներն էին հաւ 450, բրինձ քաշ 800, օճառ քաշ 326 : 50: Պարաձեռ կը փութայ Հոգաբարձութիւնը յայտարարել ի պատասխանի Ազգ. վեչ. ժողովոյ որոշողութեան զոր տուած էր իր Նոյնմբեր 2 գումարան մէջ յաւելով Պարիսի օժտաւոր (Boursier) ուսանողաց նպաստը Ազգեան հրիտակէն՝ թէ ի վիճակի չէ աննց միտը 20 ֆրանքէն աւելի տալ, եւ թէ յաւելեալ 120 օսմ. ոսկին նորոգ շինութեանց գործածելու մտադրութիւնը: Ազգ. վարչութիւնը կը բողբէ այս ընթացքին դէմ՝ ըստ այնմ որ այդ որոշողութեան իրաւունքը իմն է, եւ թէ պէտք էր նախատեսել հաշուոյ մէջ դնել զայն: Ուստի կ'որոշէ յաջորդ նիստին հրահրել Հոգաբարձութեան Անտեանաբեւ եւ բացատրութիւն խնդրել, որ ուժ օր ետքը բոլորովն կ'ամրօքի արուած համոզկեր պատասխաններուն վրայ: Արդոյ Ատեանապետը կը յաւելու նաեւ ի գիտութիւն վարչականին թէ քաղքիս մէջ ծաղկախոր երեւցած ըլլալով՝ ըստ հրահանգաց առողջապահութեան սենեկին՝ դպրոցի աշակերտք նորոգ կը պատուարուին, ընդդիմացողները դպրոցէն կը հանուին եւ նոր եկողներն ալ չեն ընդունուիր բայց եթէ պատուաստուելէն ետքը:

Մըսըրը Անտոն Պէկ 1888 Փետր. 14ին վախճանելով՝ իր կտակին ընթերցումն հասկնուած էր որ մահուանէն երեք տարի յառաջ 1885 Յունիս 11ին գրեթէ է լայն, եւ աղքատ երկսեռ մանկուոյն դաստիարակութեան ի մասս նաւորի Յակոբեան վարժարանին համար յատկացուցեր է ոսկի օսմ. 3000, որուն մէկ երրորդը Անարատ Յղութեան կարգի կուսանաց աղքատ սանուհեաց, իսկ կտակին գործողութեան համար մահուանէն ետքը երկու տարի յապաղածամ որոշեր է եւ զՉըքաճը Գրիգոր կտակակատար կարգերու Որոշեալ որը եւ ժամը մտնեալով Ազգ. վըշ. ժողովը յիշեալ գումարը ապահովելու կարեւոր միջոցները ձեռք կ'առնու: Ժողովոյն նախագահ եւ Ասեմական Ազգրեան Կ. Պատրիարքը 1 Օգոստ. 1889 գրելով սոյն իմաստով փութացած էր արդէն ժառանգորդները Ազգ. Պատրիարքարանը հրաւիրել, որուն կը պատասխանեն միայն կտակատար Չըքաճը Գրիգոր եւ ժառանգորդներուն կողմանէ փոխանորդ Մինայեան Գրիգոր փաստաբանը: Միւս կողմանէ լընով որ ժառանգորդները արդէն սկսեր են հանգուցեցնել հարստութիւնը բաժնել մեջբոնին, Ազգրեան կը փութայ կոշիկ Թընկրտ Յովսէփ Էֆ.ն եւ ժողովոյն որոշողութիւնը հաղորդել եւ կը խնդրէ միանգամայն որ իր ժառանգակցներուն իմացնէ ներկայեալ Ազգ. Պատրիարքարանը եւ կտակեալ 3000 օսմ. ոսկոյ վճարումը ապահովել: Այս եղելութեանց վրայ Մըսըրը Միշէլ իր ժառանգակցներուն հասանութեամբ հետագայ պարտամորհակը կը ձեռնագրէ առաջի ստորագրեալ վկայից:

Եալընը 3000 իւշ պին լըրայի Օսմանի Կիր

Պատիկ Թէրքիմ՝ սենեթիմ օլ տուր քի՝ միւթէվէֆա Մըսըրը Անտոն Պէկին միտակով իրաւէ բազմ օլունմար Իւրէ Սուրբ Յակոբ Մէքթէպինէ պին լըրա, վէ Սուրբ Յակոբ Թէէսիստը սայրէսիսէն իքի պին լըրա քի՝ ճէման իւշ պին լըրա օսմանի վարէթիքինին Սուրբ Յակոբ իտարէսինէ Թէտիէսին վէրէսէ Թարաֆընտան վալը օլա՝ հէվալէ իւղէրին պէն ժահիտ իթմիլ օլտուղլուման՝ մկալալը մէզգուր իւշ պին լըրայը Թարիքիմ սենեանէն իքի սենէ զարֆընտա վէ սենեվի երկզտէ տարթ կիւղէշտէ իւէ էտա վէ իթայէ վէ պէհէր ալթը այ իթիթամընտա մկալալը մէզգուրուն կիւղէշտէսին Թէտիէսի պօթլու վէ դամին իմ:

Տէրաստեթ 25 Փետր. 1891

(Դրուլիֆֆֆ 150 և.է)

Միքայէլ Մըսըրը

Վուրույի հալէ վէ պալատարի իմանըն Մըսըրը Միքայէլ Էֆէնտիսին քենտի իմպար օլտուղլունա շահատէթ իտէրիլ

25 Փետր. 1891 Գ. Սինայեան

25 Փետր. 1891 Կ. Բէքմէզեան

Այս պարտամորհակին օրինակը Ազգ. վըշ. ժողովէն հասնելով ի Ս. Յակոբ 18 Մարտ 1891 նամակա՝ երբ Հոգաբարձութեան ժողովոյն մէջ կը կարգացուի, ժողովականը յոսնկայս շնորհակալ կ'ըլլան ձեռնագրող Ասեմականին ի գիմաց Հայ կաթողիկէ Հասարակութեան:

Հարաթ մ'եպը Հոգաբարձուները վերստին գումարուելով՝ ի բացակայութեան Ատեմականին կը խորհին շնորհակալութիւն յայտնել ի գիր Կ. Պատրիարք Զոր, Ազգ. վարչութեան եւ ժառանգորդաց՝ ինդրոյն լուծման համար եւ այն Անկելանոցիս շահաւետ պայմաններով, որ են՝ չվճարել 3000 օսմ. ոսկին բայց եթէ անոր սոկոսը $\frac{4}{10}$ միշէն ցվաճաւումն Պէրութի հսկայ խանին. պայման՝ որ չի յիշուի պարտամորհակին մէջ եւ ոչ ալ Անարատ Յղութեան կարգի կուսանաց մասնակցութիւնը: Հակուակ կարծիք կը յայտնէ այս խորհուրդին միայն Զինկիլի Պաթիսի, եւ յիշատակեալ պայմանները անընդունելի կը նկատէ:

Վերոյգրեալ պարտամորհակին երկու տարուան յապաղածամը սակայն երեք անգամ կը կրկնուի հաճութեամբ վարչականին, միայն թէ վերին անգամ կը բացաւէ այլ եւս հասուցման համար Պէրութի հսկայ խանին վաճառման սպասելու թէուութիւնը, եւ յաւարտ երրորդ պայմանաժամին կտակուած 3000 օսմ. ոսկի գումարին համապատասխան կալուածոց հասցիները Անկելանոցիս յատկացնելու թէուութիւնը կ'առաջարկէ, ինչ որ չեն ընդունիր ժառանգները եւ ինդրը սոկոսին կը ձայն, բայց սոկոսը ոսկի օսմ. 120 ամեն տարի կանոնաւորապէս կը վճարուի, որմէ Ս. Յակոբ տարին 40 ոսկի օսմ. կու տայ Անարատ Յղութեան կարգի Մայրապետաց իբրեւ սոկոս:

Տիկին Պէթիթիս Օլիվ Զընալ Աշէան 1891 վախճանելով ի Մաշէսթը 500 Անգլիական ոսկի կտակած էր Ս. Յակոբայ, որ կը գանձուի Անգլիոյ Հիւպատոսարանին ձեռք, որուն վրայ յաւելում մ'ընելով Անկելանոցիս արկղէն երկու քարաշէն տուն եւս կը կառուցուի Էլմա-Տաղի փողոցին վրայ առանդուութեամբ Գագէզեան (Արաճ) Անտոն Զարտարապետին եւ

Ջինկիլլի Պաթիսթին Տակողութեամբ, որ այսօր 25, 26 թիւերը կը կրեն: Ասօք կը փութան միանգամայն նորոգել Աղքատանոցին ամենէն մեծ տունին մէկ կողմը, որ, ըստ ծարարագույնաց, փութում կը սպանան:

Լուցիքը Աճեման ի թրինթէ վախճանելով՝ 2000 Գուրոն նուիրած էր Անկելանոցի կտակաւն որ յ8 Հոկտեմբերէ 1891, որմէ 10% զեղուելով իրեն նոստարական իրաւունք՝ մնացածը Dr. Giovanni Spadoni կտակաւն տարէն կը ղեկուի եւ Credit Lyonnais դրամատունէն կը գանձուի:

Հոգաբարձութիւնը Դոկտ. Գ. Զոհրայ Անկելանոցի բժշկագիտին ձեռք խնդրած ըլլալով զԴոկտ. Արզումանն իրենս գայեակ եւ կնախտաբան ձրտաբար աշխատելու Հիւանդանոցին մէջ՝ Ազգ. վըշ, Ժողովը կը մերժէ այս խնդիրը եւ 1891 Օգոստ. 15 գրութեամբ կը զգուշացնէ Հոգաբարձութիւնը Ազգ. Անկելանոցը (Maison de santé) տուն առողջապահութեան ընելու պարագաներէն, եւ ներկայ վիճակը անփոփոխ պահել հրամայելով՝ խորհուրդ կու տայ յաւէտ յիմարաբուժութեան ճիւղը զօրացնել: Հոկտ. 15ի նոյն տարի գումարման մէջ ալ կը կարգացուի Ազգ. վարչութեան մէկ նամակը, ստորագրեալ նախագահ եւ Ատենապետ Ազարեան Կ. Պատրիարքէն, որ կը ծանուցանէր, Հոգաբարձութեան խնդրանաց համաձայն, Անկելանոցի հողին վրայ հետզհետէ կառուցանելի շէնքերուն յատանձնելը պատրաստելու համար շինութեանն թանձախուժի մը հաստատութիւնը՝ կաշմեալ յետագայ անձինքներէ:

Սարգիս Բեկ Տիւղ
Պոմիտաս Էֆ. Բեքմէզ
Անտոն Էֆ. Ազնուոր
Դոկտ. Յովսէփ Նուրիճան:

Ամսոյ 25ին ալ կը յանձնարարուի դարձեալ Աջնուոր Անտոն Էֆ. ի, պաշտօնեայ լաղապետութեան, ծանօթանալ լաւատեղեակ աղբիւրէ թէ ուր պէտք է դիմել աղքատ անընթաց համար ղեկավարութեան ծախք խնդրելու, որուն բերած պատասխանը կ'ըլլայ՝ թէ այդ շնորհը խլամաց համար է միայն, եւ այն 40 դահկան:

Նոյեմբեր ամսոյն մէջ Տիգրիս Պիրիճիկ ամուսին բանթար Յովսէփնու. իր ազատ կամօք կը շնորհէ Ս. Եակոբայ թիւ 4 քարաշէն տունը զետեղեալ Պերայի իւսնէ փողոցը:

Հոգաբարձութիւնն մասնաւոր թիւղով կը ծանուցանէ ամէն Ժողովը պետաց որ այսուհետեւ առանց կանխաւ զեկուցանելու հիւանդ չընեն, վասն զի ամէն ասեւն տրամադրելի անկողին չի գտնուիր: Ասօք երբեմն զգաստութեան համար անկարգ աղիկներ եւ կիկներ ալ կը ղրկեն ի Ս. Եակոբ, որուն համար Հոգաբարձութիւնը հրահանգ կը խնդրէ Ազգ. վարչութիւնէ, ըստ որում նա պատշաճ չի տեսներ այդ կարգի անձանց ներկայութիւնը Անկելանոցի մէջ: Վարչութիւնը այլեւայլ միջոցներ խորհելէ ետք՝ վերջապէս կը յանձնէ այս խնդիրն ալ Հիւանդանոց Թանձախուժին, ինչպէս նաեւ 1892 տարւոյն հաշուեցուցակին քննութիւնը, որուն մուտքին կողմը կը տեսնուի զուրուշ 379.237 : 80 բարա, որ այս տարի առօրեայ ծախքներէն զատ Հոգաբարձութիւնը երկու տուն եւս շինած ըլլալով՝ արկել մէջ ղուրուշ 12.044 եւ շտեմարանի մէջ ալ ղուրուշ 8792 : 10 բարայի պարեն կ'աւելցնէ: Այսպիսի գոհացուցիչ մատակարարութեան հաշուեցոյցը, ըստ հրամանի վարչութեան, այս տարի եւս տպագրութեամբ հրատարակուելով՝ կը ցրուի ի Մայրաքաղաք եւ կը ղրկուի գաւառական Առաջնորդաց եւ Միաբանութեանց Արքահայր, Հաշուեցուցակիս տեղեկագրէն կը տեսնուի նաեւ. որ Անկելանոց տարւոյն սկիզբը բաց ի հիւանդներէ ունի 93 պատասխարեալ: Տարւոյն ընթացքին մէջ ալ կ'ընդունի 194 հոգի: Այս 287 խնամալիներէն 38 կը վախճանի, 149 ալ բժշկուած կամ բարւոք վիճակի մէջ արձակուած են: Մնացած 100ը յաջորդ տարւան սկիզբը խնամելոյ թիւը կը ներկայացնէ: Բաց տարի 1400 ոտքի վրայ աղքատ հիւանդներ ալ դրսէն ներկայանալով Դոկտ. Գ. Զոհրայ Անկելանոցի բժշկագիտին ձրի խնամուած են, եւ շատ անգամ ալ անոց զեղերն իսկ Հիւանդանոցին միջերանոցէն հոգացուած (Գւ. Ան. Տի. 223):

1892 Յունուար 20ին կը վախճանի անպայման ժամանակու փոխառութեան մը համար ամիսը 40 դահկան տոկոս առնող Չիլիկիրեան խիտաւճերտին, նոյնպէս Դեկտ. 22ին երկանեան Թագուհին:

Վարչութեան Ապրիլ 24ի նիստին մէջ Ազարեան Կ. Պատրիարքը կը կարգայ Դոկտ. Ս. Նաթիկեան Պաշայի մէկ նամակը, որով Ս. Եակոբայ Հիւանդանոցին վերաբուժութիւնէն հրաժարելով՝ իր տեղը կ'առաջարկէր Դոկտ. Միհրան Զարգարեանը, յիշելով միանգամայն

անոր մեծ համարւը ամէն ուրիշ, եւ թէ պատ-
րաստ է նա, կ'ըսէր, Ենկելանոցիս հիւանդները
ձրի դարմանեցու, պայմանաւ որ ինքն ալ ար-
տնուի իր հիւանդները խնամելու նոյն հաստա-
տութեան մէջ բնակութեան վարձը միայն
սուրբով ըստ սակագնոյ Ենկելանոցիս: Առա-
ջարկը կ'ընդունուի եւ պաշտօնապէս ծանուցա-
նել կ'որոշուի ի գիր թէ Զարգարեանի եւ թէ
Հոգաբարձութեան: Մինչ Հիւանդանոցիս
բժշկական մարմինը ամբողջանալու հոգ կը տա-
րուէր, Հոգաբարձութեան անդամներէն մին կը
պակսէր: Մանուէրեան Մանուկ ընելով որ Հա-
սարակութիւնը անվստահ է իր վրայ՝ անդառ-
նալի կերպով կը հրաժարի ոչ միայն Հոգա-
բարձութենէ՝ այլ եւ ազգային ամէն պաշտօն-
ներէ թէ ներկայիս մէջ եւ թէ՛ ապագային:

Ազգրեան Կ. Պատրիարքը 1892 Մայիսի
մէջ Լեւոն Ժ. Գ. ին եպիսկոպոսութեան յիշա-
մեայ Յօդակները շնորհակտեցու համար Հռոմ
գացած ըլլալով՝ կը յաջողի յորեւտար Քահա-
նայպետէն տարին 20,000 ֆրանք ստանալ ի
նպաստ Ս. Գրի. Լ. Ուսումնարանին, որուն
ծախքը, ինչպէս վերը ըսինք, օրէ օր կ'աւելնար:
Ի գարձին Պարիսէն անցնելով Գաղղիոյ Տէրու-
թեանէ ալ քանի մը վարժարանական օժիտներ
(Bourse) կը խնդրէ աղքատ ուսանողաց համար,
որուն պատասխանը նոյն տարի Յունիսի վեր-
ջերը կ'ընդունի ի Կ. Պոլիս նոյն Ազգին դեպան
Mr. Cambonէն առանձին նամակաւ զոր թարգ-
մանաբար հոս կ'ամփոփենք: «Գաղղիոյ Արտա-
քին գործոց նախարարը նորին Երանութեան
խնդրանաց համեմատ կը շնորհակտե՛ր՝ որ Հայ
կաթողիկէ ուսանողք պիտի կարենան աշակեր-
տիլ Գաղղիոյ Հասարակաց կրթութեան վար-
ժարանները ձրի եւ առանց որոշեալ թուոյ,
բաւական է որ կարենան անցնիլ պէտք եղած
քննութենէն: Իսկ իրաւագիտութեան, բժշկու-
թեան եւ գիտութեանց նկատմամբ Հասարա-
կաց կրթութեան նախարարը իր 1893 տարւոյ
նախատեսեալ հաշւոց մէջ (Budget) նորին
Երանութեան խնդրանքն ալ պիտի բովանդակէ,
Գալով վաճառականութեան եւ արուեստից
գործոց» մէյմէ՛ աշակերտ ալ անոնց պիտի
ընդունին ձրիաբար: Նամակին պարունակու-
թիւնը Ազգրեան Կ. Պատրիարքը Ազգ. Վրչ.,
Ժողովոյ եւ առանձին թղթով Ս. Յակոբայ Հո-
գաբարձութեան հաղորդած պահուն՝ կը խրատէ
զանոնք թէ այս բարիքներէն օգտուելու համար
պէտք է դարձնել իրենց մտադրութիւնը Լու-
սաւորեան Ուսումնարանին վրայ, եւ ջանալ

գորացնել զայն օգնելով նիւթապէս անոր բար-
գաւաճման, վասն զի Հաստատութիւն մ'է այն,
եւ յաւաքագիմատէր անձինք անտարբեր գըտ-
նուելու չեն անոր նկատմամբ, որ այն Ուսումնա-
րանէն պիտի ելլեն Գաղղիոյ Համալսարանաց
առաջարկելի աշակերտներ:

Տարւոյս Յուլ. 23ին Ազգ. Վարչութենէ
կը ծանուցուի Ս. Յակոբայ Հոգաբարձութեան
որ աստի առ յապալ տարին 1500 դահեկան
տրուի Ենկելանոցին արկղէն Պատրիարքական
գիւանին ի նպաստ աղքատաց, եւ թէ նա ալ իր
արկղէն պիտի հոգայ անոնց Օսմանիէ եւ Մի-
րուրի թէզքերէները, ճամբորդութեան եւ այլ
սոյնպիսեաց ծախքը:

Մըլըրը Տիրիւկ Տուտուն, նախագահ
Հաֆաթաթ կանանց ընկերութեան, Ենկելանոցս
գալով՝ Նոյեմբերի մէջ՝ կը խորհրդակցի Հոգա-
բարձութեան հետ աղքատաց անուխ բաժնեւոր
մասին: Գեկեմբերի մէջ ալ Ս. Յակոբայ արկղը
օսկի Օսմ. 100 փոխատուութիւն կ'ընէ Օրթա-
քէշի Ս. Գրիգոր Լ. Եկեղեցւոյ 6% (վեց առ
հարիւր) տոկոսով եւ մէկ տարուան պայմանա-
ժամով, ինչ որ երկու տարուան մէջ հազիւ կը
հասուցուի:

Արձանագիրք ուրիշ նշանաւոր գործ մը
չեն աւանդեր Հոգաբարձութեանս նկատմամբ,
բայց եթէ անոր մատակարարական խնայողու-
թիւնը որ այս տարի եկամուտ կ'ունենայ զուրուշ
362,918 : 20 բարա, եւ ամէն ընթացիկ ծախ-
քերը ընելէ ետքը տարուոյ վերջը՝ արկղէ մէջ
կ'ունենայ յաւելեալ դրամ 15,831 զուրուշ
եւ 10 բարա: Ասի քաղած եմք տպագրութեամբ
հրատարակեալ հաշուեցոյցէն (գւ. Աս. Տի.
223):

ԺԳ.

ԺԱ. ՀՈԳԱԲԱՐԺԱՐԺԱՆՈՒԹԻՒՆ

1893—1895

Գասապեան Վիլէն (դեղավաճառ) Ատե-
նապետ

Գաֆիմանեան Հ. Սիլիէ Վ. } խոր-
Միսթ. Միսի. Վիեն. }
Փափագեան Յակոբ } հրդական
Տիգ Լեւոն Պէկ Գանձապետ
Հինկիւլի Պաթիսիս Ատենապոլիս:

Ի՞նչ է դժբախտաբար Հոգաբարձութեանս
չըլանը բազմադիմի արկաններով, հետախա,
երկրաշարժ եւ հարկահատութեան խտան թիւն-
ներ իրարու կը յաջորդեն, որոնց ամենուն ալ

դարմանը կը գտնէ թեւաբակութեամբ Ազարեան Պատրիարք Հօր եւ մտացի խորհրդովք Ազգ. վարչութեան: Միտիթարանք մը միայն եթէ ունեցաւ Հոգաբարձութիւնս, իր պաշտօնավարութեան երկրորդ տարին թոշակաւոր հիւանդներէ գոյացած 33.000 դահկան գումարն է, ինչ որ կը ցուցնէ Հիւանդանոցին կարեւորութիւնը:

Հետեւեալը Հոգաբարձուաց ժողովոց աւանդութիւններէն քաղուած է (դւ. Ս. 84. 8ր. 88): 1893 տարւոյ Եռեւեար 4ի գումարման մէջ Անկեանոցի ներքին տնտեսք կը կարգուի 8: Բառնարաս Վ. Սամանճեան: Այս որդւն մը Նոյն օրը յատուկ նամակաւ կը ծանուցուի Ազգ. վարչութեան, որ իր հաւանութիւնը անմիջապէս գրով կը յայտնէ: Թափորդ Նիստին մէջ Ատենադպրէն կը ներկայանայ ժողովոյն Դոկտ. Գեորգ Զօհրայ Անկեանոցի բժշկական տնի միամայ տեղեկագիրը, որ ուշի ուշով կարգադրուելէ ետքը՝ կ'որոշուի Հոգաբարձութեան դիւանին մէջ օրինակը պահելով՝ քննգրկը ղրկել Ազգ. վարչութեան, որ տարւոյս Եռեւեար 10 թուակիր նամակաւ յատկապէս խնդրած էր:

Բժշկական Տեղեկագիրք

Ս. Յակոբ Անկեանոցի

Այս բարեգործական հաստատութեան մէջ խնամելոց տարեկան շարժումը եղած է հետեւեալը. —

1892 տարւոյ սկիզբը ներկայ էին անձինք	100
Ցարդոյս չըլնանին մէջ ընդունուած են	
հիւանդք երկու սեռէ	188
Կեանք եւ անկաք	15
Խելաց հիւանդութեամբ զգածեալք	9
Պատրիարքարանի կողմէն ուղարկեալք եւ այլոց	29
	341

Թիշեալ 341 խնամելոց 180 բժշկեալ կամ լաւագոյն վիճակի մէջ արձակեալ են, 66 վաճառեալ եւ 95ը մնացեալ են, որ 1893 տարւոյն սկիզբը կը ներկայացնեն Անկեանոցի խնամելոց թիւը:

Այս տարւոյս մեռելութիւնը համեմատաբար աւելի մեծ է, սակայն ասոր պատճառը յայտ յայտնման կը տեսնուի եթէ ի նկատի առնուի ընդունուած հիւանդացի վիճակը, թողունք այն անձինքը որ հոգեկար վիճակի մէջ կը բերուին հոս պատգարակով, եւ որ նոյն ընդ նոյն կամ 24 ժամուան մէջ կ'աւանդեն իրենց հոգին շատ անգամ բժշկի այցելութեան ալ չժամանելով:

Դարձեալ ներքին խնամելոց մէջ 75 կամ 80-աման ծերք եւ պատաք կան որ բնականաբար

իրենց տուրքը կը վճարեն մահուան՝ կենաց վերջին սահմանը հասնելով:

Սակայն ամենէն աւելի դժբախտ պարագան այն է որ առհասարակ հոս ներկայացեալ հիւանդք աղքատութեան ամեն զոհանաց մէջ հալած մաշած եւ երկայն ատեն ստորին կարգի սրճարաններու եւ խաներու վատթար սենեակներուն մէջ պառկելէ ետքը՝ կու գան ոչ թէ բժշկուելու, յուսով, այլ իրենց վերջին օրերուն մէջ ոսկոխանք մը գտնելու: Անկապէս օրէ օր կը մեծնայ թիւը հիւանդացի, որ գլխաւորաբար սղելից ըմպելեաց զեղծութեամբ իրենց կենսական ոյժը կորսուած են, եւ որոնց վրայ հիւանդութիւնը ծանր եւ շատ անգամ անբուժելի ձեւ մը կ'առնուի:

Աւելի յայտնի կ'ըլլայ այս վիճակը եթէ քննենք մի առ մի այս տարւուան մէջ վաճառանելոց հիւանդութեան բնութիւնը:

Հիւանդացի թանգը եւ մարտական խողովակի բորբոքում	25
Կրիտական թոքախտ	12
Հոգեկարքի մէջ բերուած, հիւանդութիւնը անմոտ	9
Կաթուածք քրիզի եւ ողնաշարի	8
Զեխք (Thyphoide)	5
Քաղցիկ (Cancer)	4
Թոքատապ (Pneumonie)	4
Սրտի Հիւանդութիւնք	5
Այլեւայլք	4
	76

Բաց ասոր ասոնց տարիքն ալ նկատել տալ պէտք է: Թիշեալ 76 վաճառանելոց մէջ 12ը 60, 9ը 70 եւ 5ը՝ 80 տարիքը անցուցած էին:

Բանկալթի

20 Եռեւեար 1893:

Դոկտ. Գեորգ Զօհրայեան

Բժիշկ Ս. Յակոբ

Ազգ. Անկեանոցի

Ցարդոյս փետրուարին մէջ Արապ Սոֆի անուն կինը փայտաշէն տուն մը կը նստիւր Անկեանոցին Աք-Պապա փողոց ի Պանկալթի 55, 57 կրկին թիւերով:

Ոսկեբերան Եկեղեցւոյ թաղականութիւնն ալ առանձինն նամակաւ նոր առաջարկ մը կ'ընէ Ազգ. վարչութեան, ինչպէս յայտնի է տարւոյս Ապրիլ 23ի նիստին առեւտագրութենէն, որ է՝ յիշեալ Եկեղեցւոյ ետեւի պղտի հողին վրայ քարաշէն տուն մը կառուցանել իբրեւ եկամուտ, որուն ծախսոց համար առձեռնպատրաստ կայ 250 օսմ. ոսկի մեծ շուկայի խանութէն եւ 450 ոսկի ալ Ղալվաթիոյ ֆերմայէճիէր փողոցի խանութէն, երկուքն ալ Ազգ. վարչ. ժողովոյ հաւանութեամբ վաճառեալ, ընդ ամէնը 600

օսմ. ոսկի, եւ ի պարագային որ այս գումարը չբաւէ, կրնայ տրամադրելի ըլլայ, կ'ըսէ, նաեւ. 950 օսմ. գոնդոլիտ.աց (զետական պարտաթուղթ) փոխարժէքն ալ, որ ի պահ գրուած են Ազգ. Պատրիարքարանը: Ժողովն նկատի առնելով այս առաջարկը՝ թէ եւ սկզբամբ կ'ընդունի, բայց գործադրութեան մէջ կը վարանի ըստ այնմ որ մշակնենաւորապէս պիտի փնտռուէր Ս. Եփրեայ մէկ կայուածը՝ խափանուելով անոր ետեւի պատուհանաց ըստը եւ օգը: Այս դժուարութեան առաջին առնելու համար թաղականներինը կ'ուզէ փոխարինութիւն մ'ընել հրաժարելով 1700 գահական մշտնջենաւոր պատարագաց թողակէն, զոր Անկեւանոցին արկղը կու տայ ամէն տարի Ոսկեբերանի, եւ ամէն աղքատ ննջեցնող յուղարկաւորութեան ծախքէն, ուսկից աւելի կամ պակաս նոյնչափ եւս գումար մը կը գումայայ տարին: Այս ալ բաւական չհամարուելով՝ առաջարկը չ'ընդունուի, բայց ժամանակ մ'եղբը այդ հողին վրայ տարբեր կարգադրութիւն մը կ'ըլլայ, զոր իր տեղը պիտի պատմենք:

Անցեալ տարւոյ ելմտացոյցը կը ներկայանայ Մայիս 7ին Ազգ. Վարչութեան, որ Եռնիս 24ի նիստին Ս. Եփրեայ Հոգաբարձուներէն մին Յակոբիլի Պաթիսիմ Ատենադպիրը հրահարելով՝ բացատրութիւն կը խնդրէ ելմտացոյցին ինչ ինչ կէտերուն վրայ: Գոհ մնալով վարչականը տրուած պատասխաններէն՝ քանի մ'օր ետքը ելմտացոյցը վաւերացեալ կը վերագործնէ, որոնցնելով՝ Հոգաբարձութիւնը սպագորութեամբ հրապարակելու զայն, եւ կը յանձնարարէ միանգամայն վճարել իր խնայողութեան կալուածական տուրքերը, ի թէ ոչ ամենքը՝ գոնէ մաս առ մաս, օգտուելով Պետութեան ցոյց տուած գիւրութիւններէն, որ են պետական պարտաթուղթեր գնել հրապարակէն զեղեալ գնով, եւ իսկական տրժէքով ստը զանոնք թաղապետութեան ի հաշիւ կալուածական տրոյց:

Ազգ. Վրչ. Ժողովը նախահոգութեամբ կ'որոշէ բոլոր Ազգ. հաստատութեանց համար միայուն քննիչ մարմին մը ի ժամու եւ ի տաւածամու անոնց հաշիւները հետաքոտելու իրաւասութեան, որուն համար կը կարգուին Գասապեան Վիշէն զեղալաճառ եւ Գարտաշեան Եփրեայ: Որոշողութիւնն պաշտօնապէս կը հաղորդուի ամէն թաղականութեանց եւ Հոգաբարձութեանց Եռնիս 26 թուակիր շրջաբերականաւ:

Սամանճեան Յ. Բառնաբաս մինչ անընուն ակամբ կը հակեր Անկեւանոցիս ներքին բարեկարգութեան, յիմարի մը գանահոծութիւնը իրեն վերագրուելով՝ տարիէ մը հնամանալ կը ստիպուի անկէ եւ իր հրաժարագիրը անփոխ պէս կ'ուղղէ Ազգ. Վարչութեան:

Հոգաբարձութիւնը տարւոյս մէջ կ'ունենայ արտաքոյ կարգի ծախք մը հետախտ կամ շուտիմահ տարափոխիկ հիւանդութեան պատճառաւ որ ի Կ. Պոլիս կը ճարակէր, Բարեբախտարար ձեռք առնուած ապանեխակն միջոցներուն շնորհիւ այդ համաճարակը չ'օթեւանիր Անկեւանոցիս սրահները, այլ միայն քանի մը դէպք կը պատահին Աղքատանոցին մէջ, զայն ալ Հոգաբարձութիւնը անփոխապէս կը կողմնացնէ պարտէրին մէջ փայտեայ վրան մը շինելով, եւ վարակեալները հոն փոխադրելով (դ. Ատ. Տի. 223. Տեղ. հաշուց 1893): Այս պարագաներուն մէջ Անկեւանոցիս գեղերը պակսելով՝ Գեորգ Կալաւս զեղագործը կը նուիրէ 73 սոսակ գեղջոյտայ, եւ փոխարէն կ'ընդունի Հոգաբարձուաց շնորհակալքը, զոր կը յայտնեն Օգոստ. 12 նամակաւ: Ատեք կը փութան միանգամայն նոյն ամսոյ 30ին ծանուցագիր մը գրել Գարաջաշ կարապետէին, ինքզինքն փայել կը նկատու Անկեւանոցիս տրուած պարահանդէսին թերհաշիւը, որուն համար յատուկ մուրհակ տուած էր իրենց նախորդաց, զոր մաս առ մաս կը հատուցանէ Ազգեան Կ. Պատրիարքին ձեռքը Ռուս մէրի երկաթուղեաց պարտաթուղթերով: Սեպտեմբերի սկիզբն ալ նոր դպրոց եւ Երմարանոց մը շինելու մտադրութիւն կը յայտնեն Ազգ. Վարչութեան, որոնց յատակաձեւերն արդէն շինել տուած էին Ալմուռնեան Անտոն ճարտարապետին (դ. Ս. Թի. Տր. 157), որ նոյն ամսոյ 28ի նիստին մէջ իւր հաւանութիւնը տալովն հանդերձ՝ կ'որոշէ վերջապէս ծախել Մազազանեան Եփրեայի քարաշէն տունը 3000 օսմ. ոսկոյ: Այս գումարով Ս. Եփրեայ նախակրթական դպրոցը՝ Հիւանդանոցի շրջափակէն դուրս հանել կը պատուիրէ յատուկ շէնք մը շինելով, յիմարանոցը նորագութեամբ միայն բարելաւել, եւ Երմարանոցի փողոցին կալուածոց վրայ երեք տուն եւս աւելցնել: Բայց յետմեաց թաղապետական տրոյց պահանջներէն վրայ հասնելով՝ տարւոյս Կոյ. 26 նամակաւ կը զեկույնի Հոգաբարձութեան կալուածոց շինութիւնը միայն յապաղել մինչեւ առաջիկայ գարուն:

Հոգաբարձութեանս առաջին տարին աւարտած ըլլալով՝ հաշիւներն կը ներկայացնէ Ազգ. վարչութեան, որուն ելքին կողմէ կը տեսնուի 315.005 դահեկան, մուտքէն 14.585 դահեկան պակաս, ինչ որ յառաջ եկած է բնականաբար արտաքոյ կարգի արկածներէն, զորս կանխաւ յիշատակեցինք, եւ բաց աստի Հիւանդանոցին մէջ դարմանուողներուն այս տարուան 342 բարձր թիւէն: Ասոցմէ 174ը բժշկեալ կամ լուսազոյն վիճակի մէջ արձակուած են, 58ը մեռած, մնացած 110 ալ յաջորդ տարուան սկիզբը պատասպարեցը թիւը կը ներկայացնէ (դւ. Ատ. 8փ. 223. Տեղ. հրտ. 1893):

1894 փետրուարի մէջ Եւլեմիոյ նախարարութենէն Ս. Յակոբայ պարտեզը զաղտնիք քննուելով՝ Հոգաբարձութեան ազդ կ'ըլլայ թէ տուրքի նմանակայ է քանի որ վարձու արուած է: Եղբուրթիւնս անմիջապէս Ազարեան Պատրիարք Հօր կը ծանուցուի, որ կը փութայ թագրի (գրութիւն) մ'ուղղել պատկանեալ իշխանութեան ըսելով թէ Հիւանդանոցը ոչ թէ վարձք կ'առնու պարտեզէն, այլ ինքը ամսական կու տայ զայն մշակողներուն, եւ անոր բերքը Հիւանդանոցը իր պիտոյցը կը գործածէ: Այս գրութեան Հետեւածօք Անկիւնոցի դահեկան 61.476 : 25 հինգ տարուան զիջեալ տուրքերէն դահեկան 12.295 : 25 դահեկան մը միայն հաստատուելով ի հաշիւ՝ Հոգաբարձութիւնը կը յաջողի Յիմարանոցի եւ ալ կալուածոց շինութեան հրամանագրին ստանալ, եւ հերոսն մտադրած երեք տունները Մարտին մէջ շինել կը սկսի, որ այսօր ըստ կարգի կալուածոց տեսարակն 27, 28, 29 թիւերը կը կրեն: Այս յաջողութիւններէն ետքը կը յղանայ Անկիւնոցին Տիւնդապահութիւնը Գաղղիացի Գլխութեան Քայրերուն յանձնելու խորհուրդը, որ սաղմային վիճակի մէջ կը վիճէ, վասն զի յիշեալ Քայրերը այնպիսի պայմաններ կը դնեն որ Հոգաբարձութիւնը եւ ոչ իսկ հարկ կը տեսնէ Ազգ. վարչութեան հարցմէն:

Ապրիլ ամսոյ սկիզբը ձեռք կը զարնուի Զատիկի հանգանակութեան, որուն կը մասնակցին նաեւ Բրգնիկցիք՝ Ժողովելով իրենց մէջ, 1608 դահեկան, զոր կը փութան Հոգաբարձութեան յանձնելու (դւ. Ս. 8փ. Տր. 157):

Ապագ ուրբաթ օրը որ է 15 ամսոյս կը բաժնէ աղքատաց Զատիկի ուտեստը, նախապէս զըկած ըլլալով ամէն Ժողովողապետաց յատուկ տոմսեր, որ իրենց թաղին յետին աղքատաց մէջ

ցրուեն, յանձնարարելով միանգամայն որ իւրաքանչիւր ընտանեաց հայրը կամ մայրը ներկայանայ Հոգաբարձութեան իր Օսմանիէի¹ միասին:

Սոյն ամսոյն մէջ Անկիւնոցս ալ կ'ունենայ իր զատկական նուէրը ընդունելով Ազարեան Յովսէփէն ութ տեսակ զեռ. Յուլիսի մէջ ալ կը ստանայ Ազգ. Պատրիարքարանէն 125 օսմ. ոսկի մէկ վնցերորդը կառավարութենէն հասած 750 օսմ. ոսկոյ գումարին ի նպաստ արկածելոց ահուկի երկրաշարժէն՝ որ ամիս մը առաջ Յունիս 28ին պատահեցաւ ի Կ.Պոլսի ժամը ճիշդ ցօրեկին: Կը զըկուին նաեւ ուրիշ Պատրիարքարանաց իրենց փնապուց համեմատական գումարներ, որը գոյացած էին համազգային հանգանակութենէն, բացեալ ի վնցերոյս երկրաշարժին, որուն կը մասնակցին սիրայօժար ամէն մարդասէր աղինք զըկելով մեծամեծ գումարներ: Յիշեալ 125 ոսկոյ գումարէն = դահեկան 13.500, Ազարեան Արխեպիսկոպի հրեւոյս փնասեալ վնց ասոց նորոգութեան համար 5014 : 50 դահեկան հանուելէն ետքը՝ մնացած 8485 : 50 գումարին վնց 51.014 : 50 դահեկան եւս աւելցնելով՝ Անկիւնոցիս փնասեալ կալուածները կը նորոգուին (դւ. Ս. 8փ. Տր. 122): Աւելցած գումարը կ'առնուի կ'առնուի Credit général դրամատան յանձնուած աւանդ գումարէն:

Հնտախա համաճարակը Կ.Պոլսոյ գումարները հասած ըլլալով՝ հաստակաց առողջապահութեան պաշտօնարանը կը փութայ նախ զգուշութեան միջոցներ ձեռք առնուլ: Կը գրէ ի Ս. Յակոբ ցանցաւոցնէլ Աղքատանոցի ընտելութիւնը, Հոգաբարձութիւնը իրազեկ կ'ընէ անմիջապէս Ազարեան Պատրիարք Հայրը, որ թագրի մը գրելով որուն որ անկ է, կ'ըսէ. աղքատաց խառնութենէն չէ հնչախափ երկիւղը, այլ մերձակայ ձմեռանոցէն ամէն օր թափուած ձիւց ապաւարեն եւ Աղքատանոցին քովն անածոկ կոյուղիէն, որոնց համար ամէն ապանեխական միջոցները արգէն ձեռք առնուած են Հիւանդանոցին ծախիւք:

Հոգաբարձութիւնը նկատի առնելով Գովտ. Դուրիճանի ծերութիւնը՝ դարբեցնել կ'ուզէ զայն Հիւանդանոցիս բժշկապետութենէն, եւ այս իմաստով կը գրէ Ազգ. Վրք. Ժողովոյն, իսկ նա նոյնին շարունակութիւնը կը պատուիրէ Գովտ. Նափիլեանի վերաբառ ժապետութեամբ: Ասոր

¹ Եւրոպի հպատակութեան Օսմանեան կայսրութեան:

վրայ Հոգաբարձութիւնը հաւաքական հրաժարագիր կը մատուցանէ Ազգ. վարչութեան, որ շատ գծուաբար կ'ընդունի, բայց կը յանձնարարէ գնէ մինչեւ իրենց յաջորդին ընտրութիւնը շարունակել իրենց պաշտօնը: Հոգաբարձութիւնը համակերպին կամայ վարչականին եւ կը փութան պատրաստել իրենց տարեկան հաշիւը, որ ունէր մուտք դահեկան 571.498. Եւք շինութեանց ծախքերով միասին դահեկան 352.858 : 50. Արկեղ մէջ աւելցած գումար դահեկան 218.639 : 50 (դւ. Ս. Թ. Տր. 134): Մուտքին այս մեծ տարբերութիւնը յառաջ եկած է Սալզըմեանի տան վաճառումէն: Իսկ տարւոյս մէջ Անկելանոցիս մէջ պատկարները թիւն եղած է 326: Ատոցմէ 187 բոջկեալ, 438 ալ մեռած են (դւ. Ատ. Տր. 223 1894 Տեղ. Հրտ.):

1895 փետր. 17 Լէոնս Պէկ Տիւզ եւ Զինկլիք Պաթիսթ մասնաւոր հրաւիրմամբ Հոգաբարձութեան կողմանէ ներկայանալով Ազգ. վարչութեան՝ կը յայտարարեն թէ Սալզըմեանի 3000 օսմ. ոսկին 100ը փոխանցման եւ տրոց հատուցման գործածուած է, 900ն ալ երկրաշարժէ փնտսել կարուածը նորոգութեան եւ ուրիշ պիտոյից, ինչաց 2000 ոսկիով ալ նախ Եփմարանցը եւ ապա դպրոցը պիտի շինուի, որոնց համակարծիք կը գտնուէր նաեւ Դոկտ. Դուրիճան իրբեւ բժիշկ Անկելանոցի եւ իրբեւ անդամ Ազգ. վարչութեան, մինչ այս վերջինը կը կրկնէր Եփմարանցի վերաշինութիւնը առ կոթմ յետաձգել եւ նորոգութեամբ միայն շատանալ, որուն համար 4500 դահեկան եւս կը արամադէր Մայիս 21 նամակաւ (դւ. Ս. Թ. Տր. 157): Հոգաբարձութեան կը համակերպին այս որոշողութեան, բայց չեն ուզեր այդքան քիչ գումարով Եփմարանցի նորոգութեան պատասխա. նատուութիւնը ստանձնել, վասն զի բազմադիմի են, կ'ըսեն, անոր պէտքերը: Այն ատեն վարչութիւնը ինքնին կը դրկէ A. Leclerc ճարտարագետը, եւ կու տայ նորոգել Եփմարանցը որոշուած գումարով (դւ. Ս. Թ. Տր. 81):

Այս ատենները Ս. Թարոր Անկելանցը դրամական մեծ անձկութեան կ'ենթարկի, որով Ազգ. վարչութիւնը, ըստ ինքզննաց Հոգաբարձութեան հետեւեալ նամակը կ'ուղղէ Credit général դրամատան Տեսչին

Վսեմապատիւ Տէր

Ս. Թարորայ Անկելանոցին Հոգաբարձութիւնը այս միջոցի մեծ դրամական նեղութեան

մէջ կը գտնուի, գլխաւորաբար Անկելանոցին յատկացեալ միջ եւ հացի վճարումներուն անցեալ Մայիս ամսէն ի վեր յապաղելուն պատճառաւ:

Դրանօք է 2եր վսեմապատուութեան եթէ մեր աղքատախնամ հաստատութեան ծախքերը չեն կրնար յետաձգուիլ, եւ թէ իրաւի ցուայի կ'ըլլայ անոր յարկին տակ պատուարուած խեղճ աղքատաց եւ հիւանդաց վիճակը, եւր անոնց պէտքերը ամեն օր հնչողացուն, անտարակոյս Անկելանոցին կանոնաւոր մուտքերուն ներածին շափ, եւ մեր բանի մը ամիսներ առաջ առած որոշումներուն սահմանին մէջ. վասն որոյ կը խնդրենք որ հաճիք յիշեալ Հոգաբարձութեան 100 հարկու օսմ. ոսկի տալ իբր փոխ Ս. Թարորայ Անկելանոցին սեփական եւ 2եր պատուական դրամանոցներ յաւանդ գրուած 2000 օսմ. ոսկու դրամներն, այն պայմանով որ հաւանեալ փոխատուութիւնը հատուցուի միջ ուսկին յաւանդեալ վճարումներով:

Անկելանոցին միջ ուսկին դանձմար կաթողիկոսարանին միջնորդութեամբ կ'ըլլայ, ուստի անապանեալ գումարներն ամեն անգամ որ դանձունին, ուղղակի կաթողիկոսարանէն Բէլ-դէ Ժե-Նէր-առաքել յանձն կ'առնուիք ի վճարումն յիշեալ 100 ոսկու փոխատուութեան:

Կը մնամք որդեւոր սիրոյ եւ օրհնութեամբ

Բերա, 8 Նոյեմբեր 1895:

Ստեփան Պետրոս Ժ. Աղաբեան
Կաթ. Պատրիարք Կիլիկիոյ

Վսեմապատիւ Տէր

Կոմսաս Է. Բ. Բեքմէզ

Ղալաթիա

Հոգաբարձութիւնը այս գումարը անոն-
ւով՝ կը զբաղի իր տարեկան հաշուեցոյցին պատ-
րաստութեամբ, որուն մէջ կը տեսնուի Մուտք
դահեկան 284.946 : 75. Եւք 232.510 : 50
եւ արկեղ մէջ աւելցած գումար 52.436 : 25:
Այս հաշուեցոյցը տարւոյս վերջը Ազգ. վրչ-
ութեանը ներկայացուելով՝ հրամարեալ Հոգա-
բարձութեան այլ եւս խմբովին կը հնանան իրենց
պաշտօնէն թողլով իրենց յաջորդաց Եփմարա-
նոց եւ դպրոց շինելու փափաքին գործադրու-
թիւնը:

Հ. ՆՍԱՀԱԿ Կ. ՍՐԱՊԵԱՆ
Միաբան Ամուսնուն:

